ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 619-Ա/2 «27» ապրիլի, 2021 թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՏԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20)-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Կազմակերպել Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթը:

2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ
(պաշտոնակատար)

Հավելված N 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2021 թ. ապրիլի 27-ի
N 619-Ա/2 հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն կազմակերպում է Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության **ՄՐՑՈՒՅԹ**:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է համացանցային առցանց (on-line) ռեժիմով (գրանցվելով https://grants.scs.am/ հասցեում)՝ մինչև **2021 թվականի հունիսի 18-ը ներառյալ (հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին)**:

Մրցույթի հրավերի փաթեթը տեղադրված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ինտերնետային կայքում (http://scs.am/):

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչության գիտության քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնում՝ աշխատանքային օրերին՝ ժամը 14:00 - 17:00, հեռ.՝ 21-01-40 (118):

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գիտության կոմիտե

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2021 թ. ապրիլի 27-ի
N 619-Ա/2 հրամանի

ՀՐԱՎԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՏԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների (այսուհետ՝ Թեմա) հայտերի (այսուհետ՝ Հայտ) ընտրության մրցույթն (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) 2021 թվականի ապրիլի 27-ի N 619-Ա/2 հրամանի:

1.2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառների մասնագիտություններով (Հավելված N 2.1) գիտական հետազոտությունների իրականացման համար մինչև 60 ամիս տևողությամբ դրամաշնորհներ կտրամադրի 6-7 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի (այսուհետ՝ Խումբ) ղեկավարների (հիմնական հետազոտողի) նախաձեռնությամբ ներկայացված և մրցութային կարգով ընտրված Թեմաներին:

1.3. Հայտը չի քննարկվում, եթե՝

- չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
- չի բավարարում Մրցույթի հրավերի պայմաններին,
- Խմբի ղեկավարի (հիմնական հետազոտողի) կողմից ներկայացվել է Բիալի ցանկերում (Beall’s list, https://beallslist.net/) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատություն,
- միաժամանակ ներկայացված է Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթների,
- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ այլ թեմայի/ծրագրի հետ,

- Խմբի ղեկավարի (հիմնական հետազոտողի) կողմից նախկինում իրականացված գիտական թեմայի վերաբերյալ հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն) չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ մասնագիտական փորձագիտական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից տրվել է բացասական եզրակացություն:

1.4. Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող Հայտ և այնուհետև Հաշվետվություն ներկայացնելու դեպքում Խմբի ղեկավարը պետք է առաջնորդվի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներով:

1.5. Թեմայի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է նշել Կոմիտեի կողմից ստացած աջակցության մասին՝

- *Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ _____ ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:*

- *Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке РА в рамках научного проекта № _____.*

- *The work was supported by the Science Committee of RA, in the frames of the research project № _____.*

Համապատասխան նշման բացակայության դեպքում հրապարակումը չի համարվելու Թեմայի արդյունք, հետևաբար՝ չի ընդունվելու Հաշվետվության մեջ:

1.6. Թեմայի իրականացման ընթացքում, յուրաքանչյուր 12 ամիսը լրանալուց հետո, Կոմիտե է ներկայացվում ընթացիկ (տարեկան) Հաշվետվություն, որի հիման վրա Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ Թեմայի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին:

1.7. Թեմայի իրականացման ընթացքում, 35 ամիսը լրանալուց հետո, Կոմիտե է ներկայացվում եռամյա Հաշվետվություն՝ ներառելով Թեմայի ակնկալվող միջանկյալ արդյունքները, որոնց հիման վրա Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ Թեմայի ֆինանսավորումը ևս 24 ամիս շարունակելու նպատակահարմարության մասին:

1.8. Թեմայի իրականացման ընթացքում Կոմիտեն կարող է իրականացնել Թեմայի մշտադիտարկում և արդյունքները ներկայացնել Խորհրդին:

1.9. Թեմայի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին եզրակացություն տալիս՝ Խորհուրդը պետք է հաշվի առնի մշտադիտարկման արդյունքները:

1.10. Թեմայի ավարտից հետո Կոմիտե է ներկայացվում ամփոփիչ Հաշվետվություն, որի հիման վրա Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ Հաշվետվությունն ընդունելու մասին:

1.11. Կոմիտեն կարող է ֆինանսավորման երաշխավորված Թեմայի անոտացիան և Հաշվետվությունը հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

2. Խմբին ներկայացվող պահանջները

2.1. Խմբի բոլոր անդամները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ կամ ռեզիդենտներ, ինչպես նաև Թեմայի կատարման ընթացքում բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

2.2. Խմբի ղեկավար կարող է լինել այն անձը, ով՝

- ծնվել է մինչև 1981 թվականի հունվարի 1-ը,
- ունի գիտական աստիճան,

2.2.1 վերջին 10 տարիների ընթացքում Հավելված N 2.1-ի 1-ին բաժնով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների համապատասխան մասնագիտություններով իրականացվելիք Թեմաների համար ներկայացնի՝

- առնվազն տաս գիտական հոդված՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների ազդեցության գործակից (այսուհետ՝ ԱԳ)՝ ունեցող ամսագրերում, որոնցից առնվազն երկուսը «Scimago Journal & Country Ranking (SJR)»-ում ամսագրերի դասակարգման առաջին կամ երկրորդ քառորդում (այսուհետ՝ Q1 կամ Q2) ընդգրկված ամսագրերում *(https://www.scimagojr.com/journalrank.php),*
- կամ հինգ գիտական հոդված՝ ԱԳ ունեցող ամսագրերում և տաս գիտական հոդված միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (այսուհետ՝ ՄԳՇ) *(«Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts&Humanities Citation Index (AHCI)»,* գրքերի հղման ինդեքսի (*Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրապարակված գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում կամ «Scimago Journal & Country Ranking (SJR)» պորտալում՝ առնվազն* Q4 քառորդում*)* ընդգրկված ամսագրերում, որոնցից առնվազն երկուսը Q1 կամ Q2,
- կամ հինգ՝ առնվազն 5 տպագրական մամուլ ծավալ ունեցող մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական աշխատություն՝ հրատարակված Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի *(Book Citation Index)* հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում (այսուհետ՝ Մենագրություն):

2.2.2 Հավելված N 2.1-ի 2-րդ բաժնով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների համապատասխան մասնագիտություններով իրականացվելիք Թեմաների համար՝

- առնվազն հինգ գիտական հոդված՝ ԱԳ ունեցող ամսագրերում, որոնցից առնվազն մեկը Q1 կամ Q2 քառորդում ընդգրկված ամսագրերում,
- կամ տաս գիտական հոդված՝ ՄԳՇ, որոնցից առնվազն մեկը Q1 կամ Q2 քառորդում ընդգրկված ամսագրերում,
- կամ երկու Մենագրություն:

Մեկ ԱԳ ունեցող ամսագրում հոդվածը համարժեք է երկու ՄԳՇ հրապարակմանը, իսկ մեկ Մենագրությունը համարժեք է 2 ԱԳ ունեցող ամսագրում հոդվածների:

2.3. Յուրաքանչյուր միջազգային գիտական համագործակցությունից Մրցույթին կարող է դիտարկվել միայն մեկ Հայտ: Գիտական համագործակցության շրջանակներում կատարված աշխատանք է համարվում այն աշխատանքը, որի համահեղինակների թվաքանակն առնվազն 50 է:

2.4. Խմբի ղեկավարի կողմից Մրցույթին ներկայացված գիտական հոդվածներից առնվազն երկուսում, որտեղ համահեղինակների թիվը փոքր է 50-ից, Խմբի ղեկավարը պետք է լինի կամ առաջին կամ վերջին դիրքում կամ նամակագրություն վարող (corresponding author):

2.5. Եթե Խմբի ղեկավարի ներկայացված հրապարակումների առնվազն 50 տոկոսը ներկայացվել են նաև Մրցույթի այլ Հայտում, այլ Խմբի ղեկավարի կողմից, ապա Խորհուրդը, Խմբի ղեկավարների հետ քննարկումների արդյունքում, որոշում է գիտական փորձաքննության ենթակա Հայտը:

2.6. Խմբի ղեկավարը պետք է ներկայացնի հավակնոտ, բեկումնային և գիտական կադրերի պատրաստմանը միտված գիտական նախագիծ:

2.7. Եթե Խմբի ղեկավարը ծնվել է մինչև 1951 թվականի հունվարի 1-ը, ապա Խմբում պետք է ընդգրկվի մեկ կատարող (այսուհետ Համաղեկավար), ով ծնվել է 1956 թվականի հունվարի 1-ից հետո, իսկ եթե Խմբի ղեկավարը ծնվել է 1951 թվականի հունվարի 1-ից հետո և/կամ Թեման վերաբերում է մեկից ավել մասնագիտությունների, ապա Խմբում կարող է ընդգրկվել Համաղեկավար, ով.

2.7.1 վերջին 10 տարիների ընթացքում Հավելված N 2.1-ի 1-ին բաժնով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների համապատասխան մասնագիտություններով իրականացվելիք Թեմաների համար ներկայացնի՝

- առնվազն չորս գիտական հոդված՝ ԱԳ ունեցող ամսագրերում, որից առնվազն մեկ Q1 կամ Q2 քառորդում ընդկրկված ամսագրերում,

- կամ ութ ՄԳՇ գիտական հրապարակում, որից առնվազն մեկ Q1 կամ Q2 քառորդում ընդկրկված ամսագրերում,

- կամ երկու Մենագրություն:

2.7.2 Հավելված N 2.1-ի 2-րդ բաժնով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների համապատասխան մասնագիտություններով իրականացվելիք Թեմաների համար ներկայացնի՝

- առնվազն երկու գիտական հոդված՝ ԱԳ ունեցող ամսագրերում, որից առնվազն մեկը Q1 կամ Q2 քառորդում ընդկրկված ամսագրերում,

- կամ չորս՝ ՄԳՇ գիտական հրապարակում, որից առնվազն մեկը Q1 կամ Q2 քառորդում ընդկրկված ամսագրերում,

- կամ մեկ Մենագրություն:

2.8. Խմբում պետք է ընդգրկվի առնվազն երկու կատարող, ովքեր ծնվել են 1986 թվականի հունվարի 1-ից հետո: Նշված տարիքային շեմը կարող է ավելանալ՝

- ՀՀ զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ հավելյալ 2 տարով,

- երեխայի խնամքի արձակուրդի դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար հավելյալ 1 տարով:

2.9. Խմբի կատարողները պետք է հանդիսանան առնվազն մագիստրատուրայի ուսանող կամ դիպլոմավորված մասնագետ (բակալավրի աստիճան ունեցող անձը չի կարող ընդգրկվել Խմբում):

2.10. Խումբը պետք է ունենա օտարերկրյա գործընկեր (Foreign Partner, Collaborator) (այսուհետ՝ Գործընկեր)՝ ով՝

- ունի գիտական աստիճան,

- Թեմային առնչվող մասնագիտությամբ զբաղվում է գիտահետազոտական գործունեությամբ օտարերկրյա գիտական կազմակերպությունում,

- հանդիսանում է գիտական խմբի/լաբորատորիայի ղեկավար կամ զբաղեցնում է ավելի բարձր պաշտոն:

2.11. Գործընկերոջ Հիրշի ինդեքսը (h-index) ըստ «Scopus» (https://www.scopus.com/freelookup/form/author.uri) գիտատեղեկատվական շտեմարանի տվյալների, Հավելված N 2.1-ի 1-ին բաժնով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների համապատասխան մասնագիտություններով

իրականացվելիք Թեմաների համար պետք է լինի առնվազն 10, իսկ Հավելված N 2.1-ի 2-րդ բաժնով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների համապատասխան մասնագիտություններով իրականացվելիք Թեմաների համար՝ առնվազն 3:

2.12. Գործընկերը չի հանդիսանում Խմբի անդամ և Գործընկերոջ համար աշխատանքի վարձատրություն չի նախատեսվում:

2.13. Գործընկերը, մինչև **2021 թվականի հունիսի 25-ը** ներառյալ, իր պաշտոնական էլեկտրոնային հասցեից պետք է grants@scs.am էլեկտրոնային հասցեին ուղարկի իր կենսագրական տվյալները (CV) և հաստատման գրություն (confirmation letter) այն մասին, որ ծանոթ է Թեմայի բովանդակությանը, համաձայն է հանդես գալ որպես Գործընկեր և Թեմայի իրականացման ընթացքում իր ներկայացրած գիտական կազմակերպությունում կընդունի Խմբի անդամներին՝ Թեմային առնչվող միջոցառումներ (գիտափորձեր, քննարկումներ, սեմինարներ և այլն) իրականացնելու նպատակով:

2.14. Թեմայի իրականացման ամբողջ ժամանակահատվածում (60-ամսյա կտրվածքով) Գործընկերը պետք է առնվազն 30 օր գտնվի Հայաստանի Հանրապետությունում և առնվազն 30 օր իր ներկայացրած գիտական կազմակերպությունում ընդունի Խմբի անդամներից:

2.15. Խմբի անդամները (ներառյալ ղեկավարը) չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում, 2021 թվականի «Գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության» մրցույթում, ինչպես նաև հանդիսանան 2020 թվականի «Գիտական խմբերի մեկնարկի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության» և «Գիտական խմբերի կամ լաբորատորիաների ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության» մրցույթների շահառուներ:

2.16. Ֆինանսավորման երաշխավորված Թեմայի ղեկավարը և կատարողները չեն կարող հանդիսանալ Նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 1821-Ա/2 հրամանով հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթի շահառու:

2.17. Խմբի անունից կարող է հանդես գալ Խմբի ղեկավարը կամ Համաղեկավարը՝ Ղեկավարի համաձայնությամբ:

3. Կազմակերպությանը ներկայացվող պահանջները

3.1. Թեմայի իրականացման վայր հանդիսացող Կազմակերպությունը պետք է իրականացնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագիր:

3.2. Նախահաշվի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով նախատեսվում է Կազմակերպության ղեկավարի իրավասությանը թողնված գումար, որով տնօրենը (ռեկտորը) ապահովում է Կազմակերպության (բուհի գիտական մասի) գործունեությունը և ստեղծում Թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմաններ:

3.3. Մինչև **2021 թվականի հունիսի 25-ը** ներառյալ Կոմիտե պետք է ներկայացնել, Կազմակերպության (բուհի ֆակուլտետի) գիտական (գիտատեխնիկական) խորհրդի եզրակացությունը, որտեղ պետք է նշվի, թե ինչքանով է Թեման հավակնոտ, բեկումնային և իրագործելի և ինչքանով է տվյալ Թեմայի կատարումը բխում Կազմակերպության ռազմավարությունից:

3.4. Թեմայի իրականացման համար անհրաժեշտ սարքերը, նյութերը և ծառայությունները ձեռք են բերվում «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան, և ձեռք բերված սարքերի ու սարքավորումների տնօրինման իրավունքը պատկանում է Կազմակերպությանը՝ հետագայում ևս կանոնադրական նպատակներով օգտագործման (գիտական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման) համար:

4. Ակնկալվող արդյունքները

4.1. Թեմայի կատարման 35-րդ ամիսը լրանալուց հետո Խմբի անդամները տվյալ Թեմայի շրջանակներում պետք է ունենան Մրցույթի հրավերի «**1.5.**» ենթակետով սահմանված նշումով.

4.1.1. Հավելված N 2.1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության 1-5-րդ բնագավառների համապատասխան մասնագիտություններով՝

- առնվազն երեք գիտական հոդված ԱԳ ունեցող ամսագրերում, որից առնվազն մեկը՝ Q1 կամ Q2 քառորդում ընդգրկված ամսագրերում,

4.1.2. Հավելված N 2.1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության 6-րդ բնագավառի համապատասխան մասնագիտություններով՝

- առնվազն երկու գիտական հոդված ԱԳ ունեցող ամսագրերում,

- կամ առնվազն մեկ գիտական հոդված ԱԳ ունեցող ամսագրերում և առնվազն երկու ՄԳՇ ընդգրկված պարբերականներում,
- կամ առնվազն մեկ Մենագրություն:

4.2. Թեմայի ավարտից հետո (60 ամսվա կտրվածքով) Խմբի անդամները տվյալ Թեմայի շրջանակներում պետք է ունենան Մրցույթի հրավերի «**1.5.**» ենթակետով սահմանված նշումով՝

4.2.1. Հավելված N 2.1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության 1-5-րդ բնագավառների համապատասխան մասնագիտություններով՝

- առնվազն տաս գիտական հոդված ԱԳ ունեցող ամսագրերում, որից առնվազն երկուսը Q1 և առնվազն երկուսը Q2 քառորդում ընդգրկված ամսագրերում, իսկ առնվազն երկուսը Գործընկերոջ համահեղինակությամբ,

4.2.2. Հավելված N 2.1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության 1-5-րդ բնագավառների համապատասխան մասնագիտություններով՝

- առնվազն չորս գիտական հոդված ԱԳ ունեցող ամսագրերում, որից առնվազն երկուսը Q1 և առնվազն երկուսը Q2 քառորդում ընդգրկված ամսագրերում,

- կամ առնվազն երկու գիտական հոդված ԱԳ ունեցող ամսագրերում և առնվազն չորս ՄԳՇ ընդգրկված պարբերականներում, որից առնվազն երկուսը Q1 և առնվազն երկուսը Q2 քառորդում ընդգրկված ամսագրերում,

- կամ առնվազն երկու գիտական հոդված ԱԳ ունեցող ամսագրերում և մեկ Մենագրություն,

4.2.3. Թեմայի կատարման արդյունքում ակնկալվում է 30 000.0 հազար ՀՀ դրամը գերազանցող միջազգային գիտական դրամաշնորհի առնվազն մեկ դիմում (submitted grant):

4.3. 4.2. ենթակետում նշված պայմանը չկատարելը/կատարելը կանդրադառնա հետագայում Կոմիտեի հայտարարած մրցույթներին Խմբի անդամների կողմից ներկայացվելիք հայտի փորձագիտական գնահատականի վրա՝ դրանից հանելով/գումարելով տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի 5 տոկոսի չափով միավոր՝ Խմբի ղեկավարի ընդգրկված լինելու դեպքում և 1 տոկոսի չափով միավոր՝ Խմբի կատարողներից յուրաքանչյուրի դեպքում: Հանրագումարում կհանվի/կգումարվի տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի ոչ ավելի, քան՝ 5 տոկոսի չափով միավոր: Հետագա մրցույթներին Խմբի անդամների կողմից ներկայացված հայտի փորձագիտական գնահատականի նվազեցումը կչեղարկվի Թեմայի ավարտից հետո

Կոմիտե ներկայացվող ամփոփիչ Հաշվետվությունն ընդունելու մասին Խորհրդի եզրակացության հիման վրա:

4.4. Թեմայի իրականացման ընթացքում Խմբի անդամները պետք է ապահովեն Թեմայի և/կամ գիտության տվյալ բնագավառի վերաբերյալ գիտահանրամատչելի նյութերի ստեղծում և տարածում (հարցազրույցներ, գիտահանրամատչելի ամսագրերում հրապարակումներ, տեսանյութերի ստեղծում և տարածում, լայն լսարանի համար քննարկումների կազմակերպում և այլն), որոնք հաշվի կառնվեն Խորհրդի կողմից ամփոփիչ Հաշվետվությունն ընդունելու մասին եզրակացություն տալիս:

4.5. Թեմայի կատարման ընթացքում Խմբի կողմից աշխատանքների տպագրման ժամանակ պետք է նշվի Կազմակերպությանը պատկանելությունը (affiliation):

5. Հայտի լրացման և ներկայացման կարգը

5.1. Հայտը (Հավելված N 2.2) լրացնում և ներկայացնում է Խմբի ղեկավարը՝ Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով (grants.scs.am)՝ մինչև 2021 թվականի **հունիսի 18-ը** ներառյալ (Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

5.2. Կոմիտե ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

- Խմբի ղեկավարի դիմումը (Հավելված N 2.3),
- Համակարգում ձևավորված և ծածկագիր ստացած Հայտի տիտղոսաթերթը, ծախսերի նախահաշիվը (այսուհետ՝ Նախահաշիվ),
- Խմբի կատարողների անձնագրերի պատճենները, ինչպես նաև վերջին դիպլոմի պատճենը, իսկ ասպիրանտ կամ Ուսանող հանդիսանալու դեպքում՝ տեղեկանք, որտեղ նշված են մասնագիտությունը և ուսուցման տարին,
- Խմբի ղեկավարի կենսագրական տվյալները (CV),
- Համաղեկավարի կենսագրական տվյալները (CV),
- Գործընկերոջ կենսագրական տվյալները (CV) և հաստատման գրությունը,
- Կազմակերպության (բուհի ֆակուլտետի) գիտական (գիտատեխնիկական) խորհրդի եզրակացությունը:

5.3. Պահանջվող փաստաթղթերը Կոմիտե են ներկայացվում առձեռն՝ աշխատանքային օրերին ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (Օրբելի եղբայրների 22, 8-րդ հարկ, 803 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22)՝ մինչև 2021 թվականի **հունիսի 25-ը** ներառյալ:

5.4. Թեմայի ֆինանսավորման առավելագույն չափը մեկնարկային տարվա (առաջին 12 ամսվա) համար նախատեսել.

- 43 200.0 հազար ՀՀ դրամ՝ 7 անձից բաղկացած Խմբերի համար,
- 39 600.0 հազար ՀՀ դրամ՝ 6 անձից բաղկացած Խմբերի համար:

5.5. 5.4. ենթակետում նշված գումարներից մինչև 15 000.0 հազար ՀՀ դրամը նախատեսել Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Խմբի կամ լաբորատորիայի ամրապնդում» ենթահոդվածով:

5.6. Թեմայի ֆինանսավորման առավելագույն չափը հաջորդ տարիների համար (12-ամսյա կտրվածքով) նախատեսել.

- 28 200.0 հազար ՀՀ դրամ՝ 7 անձից բաղկացած Խմբերի համար,
- 24 600.0 հազար ՀՀ դրամ՝ 6 անձից բաղկացած Խմբերի համար:

5.7. Թեմայի իրականցման ընթացքում (ոչ շուտ քան 12 ամիս անց) Խմբի ղեկավարը կարող է դիմել Կոմիտե՝ Խմբի անդամների թիվը մինչև երկու կատարողով (Թեմային առնչվող մասնագիտությամբ մագիստրատուրայի ուսանող (այսուհետ՝ Ուսանող) (հնգամյա կրթության դեպքում չորրորդ կամ հինգերորդ կուրս)) ավելացնելու համար՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում:

5.8. Խմբի ղեկավարի ամսական վարձատրությունը չպետք է գերազանցի 500.0 հազար ՀՀ դրամը, իսկ Ուսանողինը՝ 150.0 հազար ՀՀ դրամը: Խմբի անդամների աշխատանքի ամսական վարձատրության միջին հաշվարկային չափն ընդունել մինչև 300.0 (երեք հարյուր) հազար ՀՀ դրամ: Աշխատանքի վարձատրության գումարը վերոնշյալ չափից պակաս նախատեսելու դեպքում տարբերությունը կարող է օգտագործվել Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում:

5.9. Խմբի անդամների թիվն ավելանալու պարագայում Խմբի ղեկավարի և Կոմիտեի միջև կնքված պայմանագրի գինը ավելանում է յուրաքանչյուր Ուսանողի համար մինչև 1 800.0 հազար ՀՀ դրամ (12 ամսվա կտրվածքով):

5.10.Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» ենթահոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների**,** հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման և/կամ ծառայությունների ծախսեր: Գիտական սարքերը և սարքավորումների ձեռք բերումը չի կարող նախատեսվել Թեմայի իրականացման վերջին տարվա համար: Բոլոր ծախսերը պետք է հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:

5.11. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Գործուղումներ» ենթահոդվածով նախատեսվող գումարը կարող է օգտագործվել Թեմայի ընթացքի ու արդյունքների ներկայացման նպատակով միջազգային գիտաժողովներին մասնակցության համար, ինչպես նաև Գործընկերոջ և Խմբի անդամների փոխադարձ այցելությունների գործուղման ծախսերը հոգալու համար: Գործուղումների նպատակը և դրա հետ կապված բոլոր ծախսերն անհրաժեշտ է հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:

5.12. Գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձն անհրաժեշտ է հաշվարկել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի, բայց ոչ ավելի, քան՝ ամսական 1500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Խմբի յուրաքանչյուր անդամի օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը (12-ամսյա կտրվածքով):

5.13. Վերադիր ծախսերը (60 ամսվա համար) չպետք է գերազանցեն 2 100.0 հազար ՀՀ դրամը:

6. Հայտերի գիտական փորձաքննությունը

6.1. Կոմիտեում ուսումնասիրվում է Մրցույթին ներկայացված և Համակարգում ծածկագիր ստացած Հայտերի համապատասխանությունը Մրցույթի պայմաններին, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է Խորհրդի քննարկմանը:

6.2. Խորհրդի որոշմամբ հաստատվում է Մրցույթի պայմաններին բավարարող և գիտական փորձաքննության ենթակա Հայտերի ցանկը:

6.3. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են Թեմայի արդի վիճակը, նորույթը, բեկումնային բնույթը, իրականացման նախադրյալները, ազդեցությունը ոլորտի զարգացման վրա, աշխատանքի ծավալի, իրականացման ժամկետների հիմնավորվածությունը, համագործակցության նպատակահարմարությունը, գիտական արդյունքների տնօրինումը և տարածումը, Նախահաշվի հիմնավորվածությունը, միջազգային համագործակցության աստիճանը, Խմբի ղեկավարի, կատարողների և Գործընկերոջ մասնագիտական համապատասխանությունը Թեմային և որակավորումը՝ ըստ գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի որոշման մեթոդաբանության (Հավելված N 2.4), ինչպես նաև Մրցույթի առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

6.4. Խորհուրդը Կոմիտեի հետ համատեղ մշակում և հաստատում է Հայտերի գիտական փորձաքննության և հարցազրույցի գնահատման թերթիկները:

6.5. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում Խորհրդում ներառված երկու փորձագետների կողմից: Յուրաքանչյուր Հայտի համար փորձագետը լրացնում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկը:

6.6. Խորհուրդը, անհրաժեշտության դեպքում, գիտական փորձաքննության նպատակով կարող է ներգրավել անկախ փորձագետներ:

6.7. Հայտերի գիտական փորձաքննությունից հետո Խորհուրդը յուրաքանչյուր Խմբի ղեկավարի հետ անցկացնում է հարցազրույց:

6.8. Գիտական փորձաքննության ժամանակ փորձագետի առավելագույն գնահատականը կազմում է Հայտի առավելագույն գնահատականի **50** տոկոսը:

6.9. Հարցազրույցի առավելագույն գնահատականը կազմում է Հայտի առավելագույն գնահատականի **50** տոկոսը:

6.10. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և հարցազրույցի գնահատականի գումարն է:

6.11. Երկու փորձագետների գնահատականները Հայտի առավելագույն գնահատականի **30** և ավելի տոկոսով տարբերվելու դեպքում Հայտը տրվում է երրորդ՝ անկախ փորձագետին՝ գիտական փորձաքննության: Այդ դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների՝ երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է: Երեք փորձագետների գնահատականների հավասար տարբերության դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականն է:

6.12. Կոմիտեի և փորձագետների կողմից Հայտի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

6.13. Գիտական փորձաքննության ավարտից հետո Կոմիտեն Հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականների նվազման կարգով գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի/մասնագիտության համար ձևավորում է վարկանիշային ցանկ ու ներկայացնում Խորհրդին՝ քննարկման:

6.14. Խորհուրդը Կոմիտեի նախագահին է ներկայացնում Հայտերի գնահատականների վերջնական վարկանիշային ցանկը:

6.15. Կոմիտեն, ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշմամբ հաստատված «Պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների» ուղղությամբ նախատեսված ծավալներից, որոշում է շեմային գնահատականը, որից բարձր կամ դրան հավասար գնահատված գիտական թեմաները երաշխավորվում են ֆինանսավորման: Նախարարը հաստատում է Թեմաների ցանկը, ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսվող ֆինանսավորման չափը:

6.16. Կոմիտեն Կազմակերպության ղեկավարին տրամադրում է Կազմակերպությունից ներկայացված և ֆինանսավորման երաշխավորված Թեմաների ցանկը, ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսված ֆինանսավորման չափը:

7. Այլ դրույթներ

7.1. Կոմիտեի և ֆինանսավորման երաշխավորված Թեմայի ղեկավարի միջև կնքվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր, միևնույն ժամանակ Կոմիտե են ներկայացվում Թեմայի ղեկավարի և կատարողների միջև կնքված պայմանագրերի պատճենները:

7.2. Ֆինանսավորման երաշխավորված Թեմայի ղեկավարի և Կազմակերպության միջև կնքվում է ծառայությունների մատուցման պայմանագիր («Վերադիր ծախսեր» հոդվածով նախատեսված գումարի չափով), որի պատճենը ներկայացվում է Կոմիտե:

7.3. Խմբի ղեկավարը կարող է դիմել Կոմիտե՝ համարժեք փոփոխություն կատարելու՝ ըստ տարիքային խմբի և գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի, կամ Խմբի կատարողների թիվը մեկով կրճատելու միջնորդությամբ՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում: Խմբի կատարողների թվի կրճատման դեպքում Խմբի ղեկավարի և Կոմիտեի միջև կնքվում է պայմանագրի գնի փոփոխության մասին համաձայնագիր:

Հավելված N 2.1
Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

Բաժին 1	**Բաժին 2**
1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	***4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
1.1 Մաթեմատիկա	4.1 Անասնաբուծություն, անասնաբուժություն
1.2 Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ	4.2 Բուսաբուծություն
1.3 Ֆիզիկա և աստղագիտություն	4.3 Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն
1.4 Քիմիա	4.4 Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա
1.5 Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ	***2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ***
1.6 Կենսաբանական գիտություններ	2.1 Քաղաքաշինություն և ճարտարապետություն
2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ	2.4 Մեքենագիտություն և մեքենաշինություն
2.2 էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	***5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
2.3 Մեխանիկա	5.1 Հոգեբանություն
2.5 Քիմիական տեխնոլոգիաներ	5.2 Տնտեսագիտություն և գործարարություն
2.6 Նյութագիտություն	5.3 Մանկավարժական գիտություններ
2.7 Բժշկական սարքաշինություն	5.4 Սոցիոլոգիա
2.8 Էկոլոգիա	5.5 Իրավունք
2.9 Կենսատեխնոլոգիա	5.6 Քաղաքական գիտություններ
2.10 Նանոտեխնոլոգիա	5.7 Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն
3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5.8 Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն
3.1. Ընդհանուր բժշկություն	***6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
3.2. Կլինիկական բժշկություն	6.1 Պատմություն, հնագիտություն
3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա	6.2 Լեզվագիտություն, գրականագիտություն
	6.3 Փիլիսոփայություն, էթիկա
	6.4 Աստվածաբանություն, կրոնագիտություն
	6.5 Արվեստագիտություն

ՆԱԽԱԳԻԾ

Ներկայացնել հայերեն և անգլերեն, յուրաքանչյուրը մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. Անոտացիա

2. Խնդրի արդի վիճակի վերլուծություն

3. Թեմայի գիտական նպատակները և խնդիրները

4. Հետազոտական ծրագիրը

5. Իրականացման եղանակները, մեթոդները

6. Օրացուցային պլանը (ըստ եռամսյակների)

7.Միջազգային համագործակցության (այդ թվում՝ Գործընկերոջ հետ) նախադրյալները, նպատակահարմարությունը և ակնկալվող արդյունքները

8. Տվյալ ուղղությամբ Խմբի ունեցած ձեռքբերումները (առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները)

9. Ակնկալվող գիտական խմբի կամ լաբորատորիայի (բաժնի) զարգացման հեռանկարները (ռիսկեր և հնարավորություններ)

10. Ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները *(հրապարակումներ, գիտաժողովներ, նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն))*

11. Օգտագործված գրականության ցանկը

Հավելված N 2.3
Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ_____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի մասնակցության «_____» ծածկագրով հայտը:

Դիմող՝_____ (_____)
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

«____» _____ 2021 թ.

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՈՐՈՇՄԱՆ

Գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշը (այսուհետ՝ ԳԳԱՑ՝ E) որոշվում է ըստ հետևյալ բաղադրիչների՝

1) **Գիտական ամսագրերի հրապարակումների[1]:** Հրապարակում գիտական ամսագրում՝ հոդված (Article) կամ ակնարկ (Review)՝ Web of Knowledge, Scopus, ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն որակավորման կոմիտեի (այսուհետ՝ ԲՈԿ) ցանկերում ընդգրկված ամսագրում, ինչպես նաև այդ ցանկերում չընդգրկված, բայց գրախոսվող ու մատենագրվող ամսագրում:
Բեալի ցանկերում (Beall's list) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում հրատարակված աշխատությունները հաշվի չեն առնվելու:

<u>Յուրաքանչյուր հոդվածի համար՝</u>

$$E_1 = \sum IF\left(\frac{1}{N}\right)^{1/3}$$

որտեղ՝

N՝ ընդհանուր համահեղինակների թվաքանակ,

IF՝ ամսագրի տվյալ տարվա ազդեցության գործակիցը (այսուհետ՝ ԱԳ)՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների,

***0.2**-ից ցածր **IF**-ի դեպքում նրան վերագրվում է՝*

***0.20**՝ ԱԳ ունեցող կամ ԱԳ չունեցող, բայց միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded(SCIE)», «Emerging Sources Citation Index(ESCI)» կամ «Scopus») ընդգրկված ամսագրում գիտական հրապարակման դեպքում,*

***0.15**՝ ԱԳ չունեցող, միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («SCIE», «AHCI», «SSCI»,«ESCI» կամ «Scopus») չընդգրկված, բայց ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված գիտական հրապարակման դեպքում,*

***0.075**՝ ԱԳ չունեցող, միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («SCIE»,«SSCI», «ESCI», «AHCI» կամ «Scopus») չընդգրկված, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի ցանկերում չընդգրկված, բայց գրախոսվող ամսագրերում գիտական հրապարակման դեպքում:*

«Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների համար՝

***1.00**-ից ցածր **IF**-ի դեպքում նրան վերագրվում է՝*

***1.00**՝ ԱԳ ունեցող կամ ԱԳ չունեցող, բայց միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts & Humanities Citation Index (AHCI)») ընդգրկված ամսագրերում գիտական հրապարակման դեպքում,*

***0.50**՝ ԱԳ չունեցող, «SCIE», «SSCI», «ESCI», «AHCI» հղման համակարգերում չընդգրկված, բայց «Scimago Journal & Country Ranking (SJR)» հղման համակարգում ընդգրկված ամսագրի դեպքում,*

***0.15**՝ ԱԳ չունեցող, «SCIE», «SSCI», «AHCI», «ESCI» կամ «Scopus» հղման համակարգերում չընդգրկված, բայց ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված ամսագրի, ինչպես նաև արտասահմանյան հայագիտական ամսագրերի դեպքում,*

***0.075**՝ ԱԳ չունեցող, «SCIE», «SSCI», «AHCI», «ESCI» կամ «Scopus» հղման համակարգերում, ինչպես նաև ԲՈԿ-ի ցանկում չընդգրկված, բայց գրախոսվող ամսագրերում գիտական հրապարակման դեպքում:*

2) **Մենագրությունների, կոլեկտիվ մենագրությունների, գիտական հրապարակումների, նյութերի ժողովածուների հրապարակումների[2]:** Մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, որևէ մեկ գիտական թեմայի նվիրված, գիտական հանրության համար նախատեսված, առնվազն 5 տպագրական մամուլ[3] ծավալ ունեցող և «ISBN» ունեցող հրապարակում: Նյութերի ժողովածու՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, մեկ կամ հարակից մի քանի գիտական թեմաների նվիրված և «ISBN» ունեցող

---

[1] 1-ին և 2-րդ կետերով ներկայացված տարեկան հրապարակումների ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 24-ը:

[2] Երկրորդ կետով ներկայացված հրապարակումների դասակարգման (մենագրություն, նյութերի, հոդվածների ժողովածու) վերաբերյալ վերջնական որոշումն ընդունվում է Կոմիտեի կողմից: Չեն գնահատվում բառարանները, կատալոգները, դասագրքերը, կենսագրականները, ինչպես նաև ժողովածուների, գիտաժողովների նյութերի կամ այլ աշխատությունների խմբագրումը և/կամ կազմումը:

հրապարակում: Նյութերի ժողովածուները ներառում են նաև մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտականորեն պատրաստված և/կամ գիտական նկարագրություն պարունակող հրապարակումները:
Բեալի ցանկերում (Beall's list) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում հրատարակված աշխատությունները հաշվի չեն առնվելու:

Յուրաքանչյուր մենագրության, կոլեկտիվ մենագրության, գիտական հրապարակումների կամ հոդվածի համար՝

$$E_2 = \begin{cases} \sum B \frac{P_{SH}}{N^{1/3}} \\ \sum \frac{CA}{N^{1/3}} \end{cases}$$

որտեղ՝

B=0,30՝ *Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում,*

CA=0,75՝ *արտերկրում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում (օտար լեզվով կամ հայերեն),*

CA=0,5՝ *ՀՀ-ում հրատարակված մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական հրապարակում (օտար լեզվով կամ հայերեն), կամ (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրապարակված գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում, կամ մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտականորեն պատրաստված հրապարակում արտասահմանում,*

CA=0,3՝ *մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտականորեն պատրաստված հրապարակում ՀՀ-ում,*

CA=0,15՝ *հոդված արտերկրում օտար լեզվով հրատարակված հոդվածների ժողովածուի մեջ,*

CA=0,075՝ *հոդված ՀՀ-ում հրատարակված հոդվածների ժողովածուի մեջ (օտար լեզվով կամ հայերեն),*

P_{Sh}՝ *ծավալ (տպագրական մամուլ)*[3]*:*

[3]Մեկ տպագրական մամուլը համարժեք է A4 ֆորմատի 16 էջ տեքստի: